

5508

Quillp 6 1912

3(47.925  
S-30

w 524

9(A7.925)  
S-36



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ 19705-59

## ԳԱՅԻՐԵՒ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆԻՆ

370  
2367-S6

1312/XVII

Տ Ե Ղ Ե Կ Ա Խ Գ Գ

ԳԱԻԱՆ, ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃՈՂՈՎՈՅ

Ա Ռ

ՊԱՏԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃՈՂՈՎՆ ՀԱՅՈՑ

Գ Ա Հ Ի Բ է Ի

(10041  
15865)

19405-59

1911 Փետր. 7/20 — 12/25 Մայիս 1912



2004

Գ. Ա. Հ Ի Բ է Ի 1912  
ՏՊԱԳՐ. ԶԱՐԵ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գ Ր Ա Ս Կ  
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

Թիկ 268



Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Գառիրէի Երեսփոխանական Ժողովոյ Դիւտնի անդամներն իրենց մէջ խորհրդակցելով, հարկ գտածեցին այս տետրակով հրատարակութեան տալ շրջանաւարտ Քաղաքական Ժողովոյ տեղեկագիրն և Եկեղեցւոյ, Աղքատաց, Վարժարանի, Գերեզմանտան և Կալվածոց Հոգաբարձութեանց և Առաջնորդաբաննի Մնաւկներուն հաշիւներն և ազգային անտեսական ընդհանուր կացութեան պատկերն ի Յ1 Դեկտեմբերի 1911:

Հաշիւներն աւելի գիւրըմբոնելի ընծայելու համար քանի մը ծանօթութիւններ կը նշանակուին ի ստորեւ:

1. — «Առաջնորդաբանի Ընդհանուր Մնաւկ» բոելով պէտք է հասկնալ այն սնաւուկն, որու մէջ անխտիր կ'ամփոփուին ազգային բոլոր հաստատութեանց եկամուտներն և ուրիշ աղբիւրներէ զոյցած զրամը: Այդ սնաւուկին է որ ամսէ ամիս կը վճարուին ազգային բոլոր ճիւղերոն համար պէտք եղած գումարները, Հոգաբարձութիւններէն առաջարկուած, Քաղաքական Ժողովոյ բովէն անցած և Երեսփոխանական Ժողովին հաստատուած տարեկան պէտքէներուն համեմատ: Շատ անգամ կը պատահի որ ազգային այսինչ կամ այնինչ ճիւղին հասովթները ժամանակին գանձել կարելի չըլլալով, անոր վերաբերեալ պատրաստ զրամչի զտնուիր Ընդհանուր Մնաւկին մէջ, որ սակայն փոխարէնն այդ ճիւղին նոյն տարուան սեփական և յառաջիկային գանձելի հասոյթներէն յետոյ վար դնելու պայմանավ կը հոգայ անոր պէտքը, այս է պատճառն որ հաշիւներու մէջ կը տեսնուի թէ ազգային հաստատութեանց զանազան ճիւղերն հանդէպ Ընդհանուր Մնաւկին պարտական կամ պահանջող են:

2.— Հաշիւներուն տումարները, բոլոր եկամուտներուն եւ ծախքերուն արգարացուցիչ թուղթերը՝ վարձու պայմանագիր, ընկալագրերու բուներու պրակներ, անդորրագրեր եւն. Առաջնորդարանի Մայք Դիւանին և Կալուածոց Դիւանին մէջ ինամով պահուած են և հօն կը զիմէ ընթերցողն եթէ հաշուոց մասին լուսաբանութեան և աւելի տեղեկութեանց պէտք տեսնէ:

3.— Կալուածոց Հոգաբարձութիւնն ու Դիւանը կը կարգադրեն ընթերցիկ գործերը, զերին հսկողութիւնն և կարգ մը անոր հետ կապ ունեցալ գործողութիւններ կը կատարուին Առաջնորդարանի ձեռքով: Նաեւ Առաջնորդարանն է որ կը վճարէ զիսաւորաբար կալուածական գատերու համար վարձուած վասարաբանին արարեկան: Դարձեալ Առաջնորդարանն է որ միւս ձեւեցրուն ո՛չ-կալուածական եկամուտներուն մէկ մասն անոնց հաշուուն լինք կը գանձէ: Երեսփոխանական ժաղավը սահմանած է որ Առաջնորդարանը միւս ձեւեցրու զուտ եկամուտներէն տասն առ հարիւր ստանայ, անոնց համար իր բրած կամ աւելի ունեցած ծախքերուն փոխարէն: Բացառութիւն կը կազմէ Ա. Եկեղեցւոյ Սընտուկն, որուն հասոյթները չեն բաւեր ծախքերուն և ամէն տարի բաց կ'ունենայ և արգէն մեծագումար պարտքը տարուէ տարի աւելի կը շատնայ:

4.— Առաջնորդարանի Ընդհանուր Սնտուկին դրամը կը պահուի Վրէտի Լիօնէ Պանդին մէջ ընթերցիկ հաշուով և հարիւրին երկուքուէս տարեկան տոկոսով:

Ժամանակին Առաջնորդարանի և Մարմինայի մասնաւոր Ալնտուկներուն սեփական արժեթուղթերը վաճառուած և արգիւնքը Մանկապարտէզի շինութեան ծախքին գործածուած ըլլալով, Վարժարանի Մնտուկը յիշեալ արժեթղթերու տարեկան տոկոսին հաւասար գումար մը կը վճարէ նոյն հասաւառութեանց:

Բարեկիշտառակ Տիգրան փաշայի կտակով Առաջնորդարանի մասնաւոր Անտուկին նուիրուած յիսուն հազար ֆրանքին մէկ մասը Մանկապարտէզի շինութեան և աղքատաց պէտքերուն գործածուած ըլլալով, այդ մասին համար Առաջնորդարանի ի նպաստ տարին 2<sup>1/2</sup> առ հարիւր տոկոս հաշուուած է Վարժարանի ու Աղքատաց Մնտուկներէն:

Ինչպէս կը տեսնուի հաշիւներէն, 1911ի շրջանին Աղքատաց Անտուկն իր հասոյթի յաւելուածով իր ամրող պարտքերը վճարած է, հետեւաբար տեղը դրուած է Տիգրան փաշայի կտակադրամին այդ հաշուէն ունեցած պահանջը: Գալով Վարժարանէ

պահանջին, երբ փաշային կտակադրամ արամագրութեան համաձայն գիւղական ազգային կալուածներու սահմանակից յարմար գետին մը գանուի, կտրելի է Երեսփոխանական Ժողովոյ որոշումով՝ անոր փոխարէնը տանել պանդան գտնուած ազգային գրամէն և գնել գետինը:

5.— Էպատիէներու մէջ կան Նոր, Քեռիչո, Խոչ եւն, և էպատիէներու մասնաւոր հաշիւներուն մէջ պաշտօնեայ բուռածներն ասոնք են, որ իրենց թոշակներն ուղղակի պատկանած էղուէի Մնտուկին կ'ստանան. ի Գահիրէ կալուածոց Դիւանի պաշտօնէից ամսականներուն և Դիւանի միւս ծախքերուն համազումարը համեմատակին հաշուով բաժնուած է հասութարեր կալուածներու վրայ և անոնց ելքին կողմբ արձանագրուած է «Կալուածոց Դիւանի ծախքէ բաժին» անունով:

6.— Էպատիէներու տարածութիւններն ի բաց առեալ Հիւսուր, կալուածագրերու մէջ նշանակուած բանակութենէն պակաս են հիմոյ, ինչու որ անոնց մէկ քանի մասերը յերան առաջի և նեղոսի ջուրերուն տակ մնացած են, հասարակաց պէտքերու համար կտակադրութենէն գնուած են եւն, ասկէ զատ ժամանակին տեղ տեղ էկտունը 23 գրաթ կը հաշուուէր և հիմոյ 24 կը հաշուուի:

Հիւսուրի էղուէին տարածութիւնը հիմոյ առաջուընէն տեղի է, զնոււմներ բրաւուն պատճառով:

Հաշիւներուն մէջ (Հ. Տ.) գրերը՝ ցոյց կուտան էղուէին րատ հիւճէթի տարածութիւնը և (Ա. Տ.) գրերը՝ արդի տարածութիւնը:

7.— Արդի պաշտօնէից անուններուն դէմ փակողդի մէջ նշանակուած փոքր թուանշաններն անոնց որչափ տարիներէ ի վեր ծառայելինին ցոյց կուտան:

Գահիրէի Երեսփոխանական Ժողովոյ

Գահիրէ, 2 Հոկտ. (Ն. Տ.) 1912 Բ. Ատենաղալիր

ՀԱՅԱ ԽՆԱՅԻԹՆԱՆ



Տ Ե Ր Ե Կ Ա Խ Գ Վ

ԳԱԻԱՌ, ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃՈՂՈՎՈՅ

Ա Ռ

ՊԱՏԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃՈՂՈՎՆ ՀԱՅՈՑ

Գ Ա Հ Ի Բ Ե Ւ



1911 Փետր. 7/20 — 12/25 Մայիս 1912

Գաւառու, Պատկ. Ընդհանուր Ժողովին 1911 Փետր. 1/14 նիստին մէջ կը լուծէր Քաղաքական Ժողովին և 7/20ի նիստին մէջ կ'որոշէր որ նոր ընտրելի Քաղաքականը լրացանէ լուծեալին չ/չանը:

Եւ որովհետեւ լուծեալ Քաղաքականն ամփաներէ ի վեր նիստը ըլլլալուն համար՝ Օրակարգը շատ ծանրաբեռնուած էր, Ընդհանուր Ժողովին միեւնոյն նիստին մէջ որոշած էր որ եթէ նորընտիրներէն փոքրամասնութիւնն հրաժարի խոկ, մեծամասնութիւնը իր պաշտօնին ձեռնարկէ և զրադի լուծելու սեղանին վրայ զիզուած խնդիրները։ Նորընտիրներէն Ասրգիս էֆ. Գարալան եան և Աւետիս էֆ. Ամիրայեան, որոնք լուծեալ Քաղաքականին ալ անդամակցած էին, թէեւ հրաժարեցան, սակայն մեծամասնութիւնն Ընդհանուրէն արուած յիշեալ որոշման համաձայն՝ 1911 տարուամբ Փետրուար 24ին առաջին անգամ՝ գումարուեցան Օրակարգին մէջ ունենալով 69 խնդիրներ։

Ընդհանուր Ժողովին 1911 Մարտ 13ի նիստին մէջ՝ հրաժարեալ Գարալանեան և Ամիրայեան էֆ. ներու տեղ բնտրեց Տր. Արգար էֆ. Տէր Մարգարեան և Արշակ էֆ. Ֆէրմանեան, որոնք

ժամանակ մը Ժողովիս գործակցելէ յետոյ , առաջինը առողջական և երկրորդը՝ բազմազբազ վիճակին բերմամբ՝ թէեւ հրաժարեցան , սակայն եղած խնդրանաց վրայ՝ յօժարեցան շարունակել իրենց պաշտօնը :

Հուծեալ Քաղաքական Ժողովը՝ իր անդրանիկ նիստը 1910 Մայիս 6ին ըրած ըլլալով՝ Ժողովոյ պաշտօնավարութիւնը թէեւ ամսուս 5ին կը լրանար , սակայն իր կամքէն անկախ պատճառանիրով՝ կարելի չըլլալով նոյն օրը պատրաստ ունենալ իր համարատութեան տեղեկագիրը յարակից մասերով , ստիպուեցաւ շարունակելու իր պաշտօնը մինչեւ ցայսօր :

Ժողովս իր համարատութիւնն ըստ սովորութեան կը բաժնէ զանազան գլուխներու :

## ԵԼԵԿՄՑԱԿԱՆ

Առաջնորդարանի և ճիւղերուն 1910 և 1911 տարիներու հաշուեկիցիներն իրենց բացատրական նօթերով արդէն մատուցուած ըլլալով Ընդհ . Ժողովոյ և Պատկ . Ժողովը ալ 1910 տարուան հաշիւները յետ քննութեան հաստատած ըլլալով արդէն , կը մնայ հոս գիտել տալ միայն թէ ազգային տնտեսական Ընդհանուր կացութիւնն բաղդատմամբ նախորդ տարիներու՝ լաւ վիճակի մէջ կը գտնուի արդ : Հազար ինը հարիւր տասն եւ մէկ տարուան Ընթացքին մէջ ո՛չ միայն կարելի եղաւ ամրողջապէս փակել աղքատաց սնտուկին պարտքը , շուրջ 1481 եգ . սոկի , այլ ունեցաւ հասութից վրայ առաւելութիւն մը , 153 ե . Ո . որ տարուեցաւ այս տարուան պիտանին մտից կողմը : Եթէ վարժարանի համար ստիպողական պարագաներու բերմամբ , որոնք մանրամասնուած են Տեղեկագրիս մէկ ուրիշ զլիսին մէջ , հնթագրեալէն շատ աւելի չծախսուէր , կարելի պիտի ըլլար վարժարանի սնտուկին շուրջ 2097 եգ . սոկի պարտքէն մաս մը զեղչել մինչդեռ 216 եգ . սոկի միայն աւելցաւ և այն ալ տարուեցաւ 1912 տարուան պիտանի մտից կողմը , և զեռ տեղը չդրուեցաւ բարեյիշատակ Տիգրան փաշացի կտակագրամը 50000 ֆր . :

Առաջնորդարանի Ընդհանուր Սնտուկը մէկ քանի ժառանգական և ուրիշ հաշիւներու կը պարտի իրը 2100 եգ . սոկի , կան

նաեւ ազգային շրջանակի պարտքեր , որոնց և նոյն Մնտուկի պահանջներու մասին տեղեկաւթիւն տրուած է 1911 տարուան հաշուեկիցի բացատրական նօթին մէջ , ուր հաստատուած է թէ Առաջնորդարանի Ընդհանուր Սնտուկին պարտքի և գոյքի գլուխներն իրար կը հակաշուեն գրեթէ : Սակայն յայտնի է թէ խնդիրն այդ հաւասարակշուռթեան վրայ չէ միայն , այլ պէտք է նաեւ հոգ տարուի որ Առաջնորդարանի Ընդհանուր Սնտուկը և ազգային հաստատութեանց զանազան ճիւղերը իրարու պարտական չի մնան , և յուսալի է թէ քիչ ժամանակ յետոյ՝ այդ ճիւղերու իրարու հետ ունեցած պարտուց և պահանջից հաշիւն ալ կարգադրուի՝ երբ վաճառուի հին վարժարանի չէնքը և վարժարանաւագատկան կալուածներու զուտ հասովթը , որու մէկ մասը այս տարի Եղանակներու վրայ շնուռթեանց սահմանեալ է , յատկացուի վարժարանի մատակարարութեան ամբողջութեամբ :

Ժողովս ուրախ է յայտարարելու թէ երբ Լամլումի խնդրին կարգադրութեան հետեւանքով , որու մասին խօսուած է տեղեկագրիս կալուածներու զուտ հասովթը , որու մէկ մասը այս տարի Եղանակներու վրայ շնուռթեանց սահմանեալ է , յատկացուի վարժարանի մատակարարութեան ամբողջութեամբ :

Ազգային տնտեսական կացութիւնը աւելի վճիռ կերպով պիտի պատկերանայ երբ Առաջնորդարանի տամարներէն գուրս ձգուին կարգ մը տնդանձելի պահանջներ և երբ կալուածներն նոր գնահատութեան բավէն անցնելով՝ արդի արժէքներուն համեմատ թիւեր նշանակուին տամարաց մէջ եւն :

Թէեւ Պատկ . Ընդհանուր Ժողովը սրաշած էր որ Քաղաքական Ժողովը խնդրոյ առարկայ պահանջներն ուսումնասիրելով՝ անոնց ջնջման մասին տուաջարկ տանի իրեն , սակայն աւելի ստիպուական և կարեւոր գործեր արդելք եղան ցարդ ուրդ քննութեան , զոր աւելի լու է որ կատարէ Ընդհանուր Ժողովէն լնտրելի Քըննիչ Մարմին մը :

Գալով երկրորդ կէտին կալուածոց Հոգարարձութիւնը կալուածներու նոր գնահատութիւն մը ըրած և Ժողովիս մատուցած էր , և Ժողովս ալ զայն Առաջնորդարանի և ճիւղերուն հաշուեքննիչ Թօրգում էֆ . Ֆիշէնկանի զրկած է անոր կարծիքն ստանալու համար : Յաջորդ Քաղաքական Ժողովոյ կը մնայ հաշուեքննիչի կարծիքին տեղեկանալէ յետոյ՝ պէտք եղածն ի գործ գնել առ այս :

Ազգային տնտեսական կացութեան ճշգրիտ և աւելի պարզ

կերպով՝ պատկերացումին համար՝ ժողովս որոշած է նաեւ որ Ա. Ժառանգական հաշիւները փակուին Մայր Հաշուին մէջ և անոնք վերաբացուին ուրիշ տեսրակներով, որ միմայն ժառանգական հաշիւներու արձանագրութեան յատկացեալ ըլլան և առընդունակ անոնց հաշիւը ուրոյն կշիռով պատրաստուի։ Ժողովս այս հարկ եղած հրահանգն ալ տուած է իր հաշուակալութեան։

Բ. Ազգային զանազան հաստատութեանց — Եկեղեցի, Առաջնորդարան, Վարժարան եւն. — պարունակութեան համար նոր ցանկագրութիւն մը կատարուի և անոնց իւրաքանչիւրը զատ զատ գնահատուի և Առաջնորդարանի հաշուետոմարաց մէջ իր առանձին հաշիւն ունենաց իւրաքանչիւր հաստատութեան շարժական գոյքը։ Յաջորդ Քաղաքական ժողովոյ կը մնայ այս կարեւոր գործն ի գլուխ հանել։

### Բ. ԿՈՂՈՒՄ ԾԱԿԱՆ

Ժողովս գնահատելով հանգերձ կալուածոց Պատ. Հոգաբարձութեան արդիւնաւոր ջանքերն, որոնց ջնորհիւ ազգային անսեսական ընդհանուր վիճակն օրէ որ զգալապէս կը բարւոքի, չկըրնար լուսութեամբ անցնիլ առ' պարագաներու վրայէն թէ տարեկան հաշիւներն, պիտի չեներու և անոնց վերաբերեալ բացատրական նօթերու և տեղեկութիւններու մատուցումն այս տարի ալ շատ ուշ մնաց և այս՝ հետեւանք է հաշուակալութեան և հայերէն թըրթակցութեան համար կալուածոց Դիւանին մէջ մնայուն պաշտօնեալ մը չգտնուելուն։

Ժողովս որոշած է այս կէտին վրայ յատկապէս հրաւերել Հոգաբարձութեան ուշադրութիւնը և ապահով է որ Հոգաբարձութիւնն այս կացութեան գարման պիտի տանի, որով այս անսպատեհութիւններն ուրիշ տարիներ չեն կրկնուիր և Քաղաքական ժողովն ալ ի վիճակի կ'ըլլայ տարեկան ընդհանուր հաշուեկշիռներն ու պիտի չեներն ժամանակին ընդհանուր ժողովին մատուցանելու։

Հոգաբարձութեան ուշադրութիւնն պիտի հրաւերուի նաեւ հաշուեքնիչ թորգում էֆ. Ֆիտողութեան վրայ՝ ժողովս խնդրած է կալուածոց Հոգաբարձութիւնն որ պատկանեալ գատարաններէն ազգային կալուածոց գրաւէ, պարտքէ, հակգէ զերծ՝ մէկ բառով անոնց լիովին ազատ վիճակ ունենալուն մասին վկայականներ հանել տայ՝ հաշուեքնիչին տրամադրութեան տակ գրուելու համար. այս գործն շրջանաւարտ Հոգաբարձութեան օրով լրացած ըլլալով, անոր յաջորդին կը մնայ աւարտել զայն։

Պերախ է յայտարարելու ժողովս թէ կալուածներու վարձքերը գոհացուցիչ եղած են 1911 տարուան մէջ և գանձումներն ալ բաւական յաջող՝ հակառակ վերսկուած անտեսական տագնապին, բամպակի որդերու պատճառած տւերներու և գներու անկումէ յառաջ եկած վնասին։ Ուրախ է նոյնպէս որ յետամնաց

կալուածոց Հոգաբարձութիւնն և հաշուեքնիչ թորգում էֆ. Ֆիտիչներան՝ համաձայն են սա կէտին վրայ թէ կալուածական հաշիւներու տարեկլուխը Յունուարին սկսելով շփոթութեան տեղի կուտայ ա'յն պատճառաւ որ կալուածոց վարձակալութեան սիմեայ շրջանը նոյեմ. 1ին կ'սկսի և Հոկտ. 31ին կը վերջանայ։ Ժողովս ալ նկատելով որ կալուածոց Հոգաբարձութեան ինչպէս եւ Առաջնորդարանի հաշիւներու խիստ մեծ մասը կալուածական է, յարմար կը դատէ որ թէ՛ միոյն և թէ՛ միւսին ամբողջ հաշիւներն՝ տամարաց մէջ փակուին Հոկտ. 31ին և բացուին նոյեմ. 1ին ըստ Եւրոպացւոց. տարեկան հաշուեկշիռներն ալ ու կանխսակշիռ պիտի չեներն այդ թուականին պատրաստուին ու մատուցուին։ Յաջորդ Քաղաքական ժողովին և կալուածոց Հոգաբարձութեան կը մնայ այս մասին պէտք եղածն ի գործ գնել։

Հաշուեքնիչ թիշէնկճեան էֆ. Ի գիտողութեան վրայ՝ ժողովս խնդրած է կալուածոց Հոգաբարձութիւնն որ պատկանեալ գատարաններէն ազգային կալուածոց գրաւէ, պարտքէ, հակգէ զերծ՝ մէկ բառով անոնց լիովին ազատ վիճակ ունենալուն մասին վկայականներ հանել տայ՝ հաշուեքնիչին տրամադրութեան տակ գրուելու համար. այս գործն շրջանաւարտ Հոգաբարձութեան օրով լրացած ըլլալով, անոր յաջորդին կը մնայ աւարտել զայն։

Ուրախ է յայտարարելու ժողովս թէ կալուածներու վարձքերը գոհացուցիչ եղած են 1911 տարուան մէջ և գանձումներն ալ բաւական յաջող՝ հակառակ վերսկուած անտեսական տագնապին, բամպակի որդերու պատճառած տւերներու և գներու անկումէ յառաջ եկած վնասին։ Ուրախ է նոյնպէս որ յետամնաց

վարձքերու գումարն ալ տարուէ տարի կը նուազի։ Հոգաբարձութիւնը ժամը հոսած կը կարծէ ազարակներու հասոյթներուն մէկ մասը յատկացնելու հողային անհրաժեշտ բարելաւութեանց և շինութեանց, որոնց գործադրանքիւնը շատ կարեւոր արդիւնքներ կ'ապահովէ ապագային համար։

Ժաղոփոխ այս անգամ կատարելապէս համակարծիք Հոգաբարձութեան՝ խրաքանչիւր եղատիքին պէտք էլիջ այդ նպատակով նշանակուած թիւերն անփափօխ պահեց և այս իսկ պատճառաւ բաւ բացառարար յարմար կը գտատէ որ Աղքատաց և Առաջնորդարանի պէտքէներու համար այս տարի 5 առ 90 պահեստի բաւական համարուի, վարձարանը պահեստ չունենայ՝ նոյնպէս միայն այս տարուան համար։

Եզրահուն. — Ազգային ամենէն ընդարձակ և ամենէն արգիւնարեր եղատիքէն՝ Եզրահուն ըլլալով, ամենէն յառաջ տեղեկութիւն անոր մասին։

Այս էպատիյէի նախորդ վարձակալ Ալի Էֆ. Լամբումի բազմակին և բազմամեայ հաշուական խնդիրը չնորհիւ Պատկ. Բնդշանուր ժաղովէգ կազմեալ լիազօր Մասնախումբին ջանքերուն՝ կարգադրուեցու և իրաւախոհութեան գիրն՝ տեղւոյս խառն դատարանի պատկանեալ սենեկին մէջ երկուուներ կնքուեցաւ անցեալ Փետրուար 24ին (Ն. Տ.) և ջնջուեցաւ առկախ դատն, որ այս խնդրոյն առթիւ Առաջնորդարանի և Լամբումի միջիւ գոյութիւնը Պէնի Առէֆի գտատարանին առջեւ։

Նախ քան այդ իրաւախոհութեան պարմանները պարզելը՝ հարկ է յիշողութիւններու նորոգութեան համար՝ մէջ բերել Ալի Լամբումի հաշիւն, որու ամփափումն է հետեւեալը մեր տամարաց համաձայն։

Եղ. Ուղ. Դր.

Վարձակալութեան նախորդ շրջանէ պարտքը 29250

Նոր վարձակալութեան 600 ֆէտ. 465էն 3 տարեկանը 837000

Հողային բարենարովութերու ծախրի փոխարէն 29250

---

895500

Աեւենի ձեռքով Առաջնորդարանի Սնտուկին յանձնուած ուղղակի և կալ Հոգաբարձութեանիջոցաւ 194958

---

700541

Վճարածը նոր վարձակալութեան հաշւուն, որ օրուան Քաղ. Ժաղովը Առաջնորդարանի տամարաց մէջ հին վարձակալութեան հաշւուն անցնել տուած էր 29250

---

671291

Սակայն գիտել արժան է որ նաեւ 75793 ողջ զրչի գումար մը, որ զեքտրեին ձեռօք գանձուած է և մասամբ էպֆահսի էպատիէի տուրքին ծախսուած է և մասամբ ալ կալուածոց Հոգաբարձութեան ձեռօք Առաջնորդարանի հետ հաշուակցուած է, սակայն ծանօթ պատճառաւ Լամբումի հաշուէն դեղուած չէ տակաւին։

Լամբում կ'առարկէ թէ ինք հողերու բարելաւման համար նոր վարձակալութեան չըչանին յանձն առած էր 300 անգղ. սոկի ծախսելու և մասամբ ալ ծախսուած էր, սակայն որովհետեւ Առաջնորդարանն առաջին տարին իրեն գէմ գատ բացած էր Եղատիքն ետ առնելու համար և երկրորդ տարուան վերջն ալ առած էր՝ ինք ալ չէր կրցած այդ երեք հարբիւր սոկին ամբողջովին ծախսուեւ Եղատիքն յազգային բարեկաւման։ Այս 29250 դրւ. միացնելով վերցիշեալ 75793 զրչին հետ կը կազմուի 105043 դրւ. որ զեղչելով 671291 զրչին կը մնայ շուրջ 5662 եգ. սոկի։

Լամբում կ'առարկէր նաեւ թէ էպատիէին տարածութիւնը թէնեւ թուղթի վրայ 600 ֆետուն էր, սակայն իրապէս 540 ֆետուն հող կար մշակելի, ինչ որ սասուց է, հետեւաբար Լամբում զեղչ մըն ալ սոկի կ'ակնկալէր։

Լամբում կ'առարկէր նաեւ թէ երկրորդ տարուան վերջերը Առաջնորդարանը կառան Պատարանի կողմէ զեքտրե կարգել տուած և իր բերքերն հանիւ տակ առնելով ծախսել տուած է, որով ինքն ալ վեսա սենեցած է, որու քանակութիւնը շատցած է երկրորդ տարին Եղատիքն իր ձեռքը չմնալուն և այդ պատճառաւ այդ տարուան շահէն զրկուելուն համար։

Այս և նման առարկութիւններով՝ Ալի Էֆ. Լամբում մինչեւ անգամ 15000 սոկի վեսա հատուցման համար՝ պահ մը գատ բացաւ Առաջնորդարանի գէմ Աղեքսանդրիոյ իսաոն Պատարանին առջեւ։

Առաջնորդարանի և Ալի Լամբումի և խնդրոյն հետ կապ ունեցող ուրիշ անձերու միջեւ կնքուած վերցիշեալ իրաւախոհութեան գրին գօրութեամբ՝ Ալի Էֆ. Լամբում Առաջնորդարանի պիտի վճարէ ուղղակի

Եղ. Ոսկի 250

Փոխադրելի 250

Փոխադրեալ	ԵԳ. Առկի
Գահիրէի Խառն Դատարանի Սնտուկն աւանդ գումուած ծանօթ գումարը տոկոսով հանդերձ պիտի գտնձուի Առաջնորդարանի կողմանէ	250
Աղեքսանդրիոյ Խառն Դատարանը գտնուած և կորսուած չետով մը Ալի Էֆ. Լամլումի անուան փոխանցուած գումարը տոկոսով հանդերձ գտնձելի Առաջնորդարանի կողմանէ	785 (1)
Այդ երկու գումարներուն տոկոսն իրը	2250 (2)
	250
	<u>3535 (3)</u>

Ալի Էֆ. Առզգակի վճարելիք 250 սոկիէն հարիւրը՝ գանձուած է արդէն և մնացեալն ալ գտնձելի տարւոյ Հոկտեմբեր ամսուն :

Իրաւախոհութեան զրին մէջ յիշուած բոլոր գումարներուն վճարման համար՝ Ալի Էֆ. Լամլումի հայրն երաշխաւոր եղած է :

Գահիրէի Դատարանի սնտուկը գտնուած գրամն այս օրերս կը գտնձուի . Աղեքսանդրիոյ Դատարանի Սնտուկը գտնուած գրամն գտնձելի է այս տարուան Մելու. 20ին :

Աւելորդ է ըսկել թէ կնքուած իրաւախոհութեան գրոյն զօրութեամբ՝ Առաջնորդարանը յիշեալ շուրջ 3535 սոկիէ աւելի բան մը չպիտի պահանջէ Ալի Էֆ. Լամլումէ և Ալի Էֆ. ալ յայտարարծ է թէ Առաջնորդարանի դէմ ո՛ և է տուարկութիւն, գտտ և խնդիր չունի այլեւս :

Ժողովս իր մասին խորին չնորհակալութիւն կը յայտնէ Լամ-

(1) Տոկոսով մէկտեղ 1912 Մայիս 30ին գտնձուած է 84596 դր. ողջ : — (2) Բառ իս այս գումարին ճիշդը՝ 3827 ու կէս ԵԳ. սոկի է, որովհետեւ Ալի Լամլում վարձակալութեան նոր պայմանագիրը կնքած պահուն 292 ու կէս ԵԳ. սոկի վճարած էր այդ պայմանագիրի հաշուին, սակայն այն տաենի Քաղաքական ժողովը Լամլումի հին վարձակալութեան հաշուէն ունեցած պարտքին արձանագրել տուած էր այդ գումարը : — (3) Տոկոսով մէկտեղ 1912 Մելու. 15/28 ին գտնձուած է 2442 սոկի, 40 դր. ողջ :

Հումեան լիազօր Յանձնաժողովին անդամոց՝ Ազն. Հայկ Խնայէթեան, Զէքի Գրիգորիան և Լիւսն Փափաղեան Էֆ. Ներսու :

Եզքահով էպատիյէն այժմ զոհացուցիչ վիճակ մը ունի, ծախքերը չափաւորուած են և գանձումները կանոնաւոր կերպով կը կտարուին, վարձակալութեան պայմանագամն այս տարի կը լրանայ և Հոգաբարձութիւնը կը յուսայ թէ միեւնոյն պայմաններով վարձով կը գտնէ :

Այս տարուան պէտքէին Եքքահով էպատիյէին մէջ կամուրջի մը և էզպէի մը շինութեան համար 400 ԵԳ. սոկի տրամադրած է : Եթէ Պատկ. Ժողովդ հաւանի, այս շինութիւնները կը կատարուին այս տարի, որով շատ հաւանական է որ ապագային մէջ էպատիյէին վարձքերն տւելնան :

Տէինա. — Այս էպատիյէին պակսած 17 ֆէտոռնին տեղ՝ կառավարութենէն նոյն տարածութեամբ կտոր մը առնուած է, ինչպէս նուեւ 17 ֆէտոռնի ուրիշ կտոր մը : Այս էպատիյէին համար եւս այս տարուան իր մասնաւոր պէտքէին մէջ 150 սոկոյ գումար մը նշանակուած է՝ անհրաժեշտ շինութեանց և հողակին բարելաւմանց համար :

Գիմն ել Արուս. — Այս էպատիյէի վարձքն այս տարուան սկիզբէն 100 սոկի աւելցած է, պայմանաւ որ ջրանցք մը բացուի՝ անոր՝ ջուրը քիչ մէկ մասին պէտք եղածին չափ ջուր մատակարարելու համար : Կալուածոց Հոգաբարձութիւնն այս ջրանցքն բանալու համար ձեռնարկիներ ըրած է արդէն, որ եթէ անհետեւանք մնայ, մինչեւ այս տարուան Օգոստ : ամիսը, յաւելեալ 100 սոկիի վարձքէն 60ը պիտի զեղուի : Կալուածոց Հոգաբարձութիւնն էզպէի մը շինութեան պէտքն անհրաժեշտ գատած է . սակայն այս մասին այս տարուան պիտածէին մէջ ո՛ և է գումար նախատեսուած չըլլալով, կ'երեւի թէ ապագային ձգած է այս շինութեան վարձքին պահանջումը :

Շէյս էրման. — Այս էպատիյէին մէջ 53 ֆէտոռնի չափ խորտ ու բոլոր կտոր մը կայ, այդ կտորն ուրդելու և ուրիշ բարելաւման համար 220 սոկի նշանակուած է էպատիյէին մասնաւոր պիտածէին մէջ, զոր ժողովս ալ ընդունած է :

Հիսաս. — Այս արտին անգոհացուցիչ վիճակը կը չարունակէ գմբաղդաբար : Զայն աւելի հասութաբեր լնելու համար կալուածոց Հոգաբարձութեան ջանքերն՝ ապարդիւն մնացած են : Անհրաժեշտ է որ հարուատ ու կարող անձ մը գտնելով երկար պայմանագամով ու չափաւոր գնով անոր վարձու տրուի այս արտը,

պայմանաւոր վարձակալը իր անձնական գրպահի ծախքով ի գործ գնէ զայն սէտք եղած կերպով հասութաբեր լնելու միջոցները, և պայմանաժամը լրանալուն՝ արտը բարելու վիճակի մէջ՝ Առաջնորդաբանի յանձնէն : Անհրաժեշտ է հրահանգ տալ կալուածոց նոր Հօգաբարձութեան, որպէս զի այս տեսակ վարձակալ մը գտնէ . Ժողովս այս արտին մէջ շտեմարանի մը շինութեան ու հարաֆներու մաքրութեան համար կալուածոց Հօգաբարձութեան առաջարկած 240 սակելոյ վարկն լնողունած է իր մասին :

Սիսի Ղազի. — Կալուածոց Հոգաբարձութիւնն այս անմշակ գետնի մասին կը գրէ. «Այս հողերուն համար կը շարունակենք վճարել ասրբեկան 70-75 սոկիի գումար մը, որուն դատապարտուած ենք մի քանի տասնեւակ տարիներէ ի վեր, յօւսալի է ասկայն որ առ առաւելն երկու տարիէն երբ Ասուանի աւազանը լուսնայ և երբ Մարբիութիւնակը ցամքի, ինչպէս որ կառավարութիւնն որոշած է ընել, այն տաեն այդ հողերուն արժէքը զգալիօրէն պիտի բարձրանալ, այս պարագային կրնայ հողը նպաստաւոր գնով մը ծախուի՝ փոխարէնը հասութարեր հող մը գնելու համար և կամ զայն բարելաւելու փորձ մը կ'ըլլաց հասութարեր ընելու համար։ Առայժմ պէտք է գոհանալ անոր սահմաններուն վրայ հսկելով, որպէս զի դրացիներու կողմէ սանձգութիւններէ զերծ մնայ»։

Ժաղավարձիք է Կալուածոց Պատ . Հոգաբարձութեան ,  
սակայն և այնպէս խնդիրը շատ կարեւոր լլլալուն համար՝ զայն  
կը մատուցանէ Պատկ . Ընդհանուր Ժաղավայ ի վերջնական անօրի-  
րինութիւն :

Այս տեղեկագրին մէջ<sup>(\*)</sup> արձանագրուածներէն զատ՝ կան կարգ մը կայուածական խնդիրներ, որոնց կարգադրութիւնը յա-

(\*) Կալուածոց Հոգաբարձութեան առ Քաղ. Ժողովի մատուցած տեղեկագրին մէջ ուշագրաւ է հետեւեալ հատուածը՝ «Ահա ինչպէս կը տեսնուի վերեւի տրուած մանրամանութիւններէն, կալուածոց մատակարարութիւնը տարուէ տարի զգալի յառաջդիմութեան շաւդին մէջ մտած է։ Այս յաջողութիւնը ամենէն փայլուն ապացոյցն է ա'յն դրութեան՝ որ հոգաբարձութիւնս ընտրած է իր պաշտօնավարութեան առաջին օրէն, այն է մատակարարութեան առօրեայ և ընթացիկ գործերը յատուկ վարիչի մը յանձնելիր»։

ջորդ Քաղաքական ժողովոյ և կալուածոց Հոգաբարձութեան կը  
մնայ: Այս խնդիրներուն առանցքն են Ապահնի տունը, Գերեզ-  
մանատան մերձակայ բլուրին ի՞նչ ի՞նչ պայմաններով կառավա-  
րութենէն ձրի ստացումը, անոր մօտ վահանի գետին մը, Ֆում  
էլ Խալիկի տունը և Շարա Պատրանի պարապ գետինը եւն: :

Ժողովս սրոշած է վերջերս որ Առաջնորդարանի և Հոգաբարձութիւններուն քով հարիւր ոսկիէն աւելի զրամ չգտնուի, այլ Գրէտի Լիօնէ Պանգան դրսի: Արդէն Առաջնորդարանի Գանձապետին քով գրիթէ երբէք կարեւոր գումար մը չգտնուիր. Եւ եթէ անցեալ տարուան Դեկմ. 31ին 566 սոկի կ'երեւաց անոր քով ըստ տամարի, իրականին մէջ այնպէս չէ սակայն: Կալուածոց Դիւնը 1911 տարուան հաշուան ընելիք վճարում ունենալով՝ անոր խնդրանաց վրայ Մայր Դիւնի հաշիւները փոխանակ 1911 Դեկմ. 31ին փակուելու 1912 Յունուար Յին փակուած են և այդ օր եղած վճարումը Դեկմ. 31ի հաշույն տարուած է:



Ժողովս պաշտօնի ձեռնարկած պահուն՝ վարժարանը գոհացուցիչ վիճակ մը չունէր, ծնողք վարժարանի անկարգութեան մասին Հոգաբարձութեան դէմ բողոք բարձած էին ազգային իշխանութեան, տնօրէն չկար, Ընդհանուր Ժողովը իր մէջէն Յանձնաժողով մը կազմած էր Վարժարանի խնդիրները քննելու և արդիւնքն իրեն տեղեկագրելու պաշտօնով։ Ընդհանուր Ժողովոյ անցեալ տարուան Մարտ 3ի նիստին մէջ Ա. Առաջնորդ Հայրը կը յայտարարէր թէ իրաց այս վիճակին գլխաւոր պատճառն է տնօրէնի մը չգոյութիւնն. հարկ անհրաժեշտ է, որքան կարելի է շուտ, Վարժարանն օժտել ձեռնհատ, գործունեալ և վարչական կարողութիւն ունեցող Տնօրէնով մը, որ պէտք է կարգապահական խնդիրներու մէջ անկախ ըլլայ Հոգաբարձութենէն։

Ընդհանուր ժողովը Ն. Մրբազնութեան առաջարկին վրայ՝ կ'սրոչէ որ Քաղաքական Ժողովն քանակցութեան մտնէ Պարտիզակի Ամերիկեան բարձրագոյն վարժարանի երկրորդ Տնօրէն Մինաս էֆ. Ծալեանի հետ ի հարկին մինչեւ երեք տարի պայմա-

նաժամի հիման վրայ և բանակցութեան արդիւնքը ժողովին հազարէ:

Վերոյիշեալ Յանձնաժողովն այս միջոցին կուտար իր տեղեկագիրն, որու վրայ բանաձեռ մը կը քուէարկուի Ընդհանուր ժողովին կողմանէ և ժողովիս միջոցաւ կը հազորդուի Հոգաբարձութեան: Հոգաբարձութիւնը կը մատուցանէ իր հրաժարականն, որ կ'ընդունուի ժողովոյս անցեալ տարուան Ապրիլ 12ի նիստին մէջ: Ժողովս ի՞նչ ի՞նչ նկատումերով՝ յարմար չդատեց Հոգաբարձութեան մը անմիջական կազմութիւնը և իր կողմանէ վարժարանի վրայ առժամեայ հսկող կարգեց իր անդամակիցներէն Տիար ժամկոչեան և ֆէրմանեան էֆ.ները, որոնք վարժարանական տարեշլքանի մերձաւորութեան պատճառով և ժողովիս հաւանութեամբ զանազան քաղաքներ գիմումներ ըրին և ամեն կարելի ջանք ի գործ դրին՝ վարժարանը կարսղ պաշտօնէութեամբ մը օժտելու համար:

Ժողովս Տնօրէնութեան պաշտօնին համար բանակցութեան մտաւ Ծալեան էֆ.ի հետ, նախ երեք տարուան հիման վրայ, ինչպէս Ընդհանուր ժողովն որոշած էր, միեւնոյն ժամանակ զգացնել տալով Ծալեան էֆ.ի թէ կարելի է մէկ տարուան համար ալ պայմանաւորուիլ:

Ընդհանուր ժողովն անցեալ տարուան Մայիս 16/29ին, ժողովոյս առաջարկին վրայ որոշեց որ Գահիրէի ազգային վարժարանաց Տնօրէներն ազատ ըլլան վարժարանի ուսումնական ճիւղի վարչութեան մէջ և Հոգաբարձութեան պաշտօնը սահմանափակուի միայն նիւթական մատակարարութեան մէջ, և Քաղաքական ժողովոյ պաշտօն յանձնեց այս որոշման հիման վրայ վարժարանի կանոնագրին պատկանեալ յօդուածներն բարեփոխելով ժողովին վաւերացման մատուցանել:

Ժողովս իր այս մասնաւոր պաշտօնը կատարեց և արդիւնքը մատուց Ընդհանուր ժողովին, որ տարւոյս 16/29 Փետր. նոտի մէջ որոշեց որ այն օրէն սկսեալ տարուան մը համար առ ի փորձ գործադրութեան դրուի բարեփոխեալ կանոնագրին: Ժողովս ի մէջ այլոց նկատելով որ փորձի համար որոշեալ պայմանաժամը, դպրոցական երկու տարիներու մէջտեղ կ'ինայ, ի՞նչ որ իր մեծ անպատճութիւններն ունի, կ'առաջարկէ որ այդ միամեայ շըրջանը սկսի 1912 տարուան Օգոստ. 1ին և վերջանայ Յուլիս 31ին այսինքն դպրոցական ամբողջ տարի մը:

Ժողովս Մինաս էֆ. Ծալեանի մասին նոյն իսկ Գաւառ. Ընդհ.

Ժողովոյ որոշած անձերու կողմէ շատ լաւ տեղեկութիւններ ստանալէ յետոյ՝ անոր հետ տարուան մը համար պայմանաւորուեցաւ, տալով անոր աղատութիւն ուսումնական վարչութեան մասին, համաձայն Ընդհ. ժողովին նախապէս տրուած որոշումներու: Բայց կնքեալ պայմանագրի՝ պաշտօնէից անուանումը Տնօրէնին կը պատկանի սակայն անոնց ամսականի քանակի որոշումն և ի պաշտօն կոչումը կը վերաբերի Քաղաքական ժողովոյ:

Ժողովս նկատելով որ վարժարանը՝ ծանօթ պատճառներով փոխանցման շրջանի մը մէջ կը գտնուի և Հոգաբարձութեան երկու տարուան պայմանաժամըն մեծ մասն անցած է արդէն և այդ վիճակին մէջ Հոգաբարձութեան մը կազմութիւնն եթէ իր գըժուարութիւններն ալ չունենայ, անպատճէութիւններէ զերծ չպիտի ըլլայ, որոշեց որ իր մէջէն երեք անձինք «Կրթական Մասնախումբ» անունին տակ ժողովոյս անունով կատարեն վարժարանի նիւթական մատակարարութեան գործերը:

Ժողովս մեծապէս կը գնահատէ այս Մասնախումբին և յատկապէս Տնօրէն Ծալեան էֆ.ի չանքերն, որոնք յաջողեցան քիչ ժամանակի մէջ վարժարանը գնել բարոյական և ուսումնական յառաջիւնութեան ճամբուն մէջ, կարգապահութիւնը կատարեալ է ի վարժարանի, երկուեւ սանուուց թիւը զգալապէս աւելցած է և գոհունակութիւնը կը ճառագայթէ ծնողաց և վարժարանի վիճակին մօտէն տեղեակ ազգայիններուն դէմքին վրայ:

Ահաւասիկ այս պատճառներով ժողովս Կրթական Մասնախումբի անդամոց առաջարկին վրայ՝ վարժարանի համար շատ օգտակար գտած է երեք տարուան համար երկարել Ծալեան էֆ.ի պաշտօնը: Անոր հետ կնքած է պայմանագրի մը, որ յարմարցուած է արդէն կնքուած և շրջանը լրանալու վրայ եղած պայմանագրին. աւելցած է միայն մէկ յօդուած որ կը տրամադրէ թէ պայմանագրի վաւերական է այն ատեն միայն՝ երբ Պատկ. ժողովդ հաստատէ զայն: Ժողովս ուրեմն Ծալեան էֆ.ի հետ կնքեալ և ներփակեալ պայմանագրի վայրէ Պատկ. Ընդհանուր ժողովոյ վաւերացման կը մատուցանէ:

Ժողովս սակայն այն խոր համոզում ունի թէ իր պաշտօնի բարձրութեան վրայ գանուող Տնօրէն մը իսկ՝ չի կընար մինակ վարժարաններն բաղձացեալ տատիճանով բարւոք վիճակի մը մէջ գնել, եթէ միեւնոյն ժամանակ կարգ մը էտկան պայմաններու եւս գոհացում չի տրուի, որպիսիք ին շէնքի յարմարութիւն, ծնողաց հարկ եղած դիւրութիւններն լնծայել իրենց զաւակներն ազգային վարժարան զրկելու համար եւն, եւն, եւն..:

Ժողովս տեսնելով որ Պէնի Սուրէնի Ս. Եկեղեցւոյ շրջափառ էին մէջ գտնուող Մանկապարտէզի շէնքն անձուել, խարխուել եւ վատառողջ է՝ անցեալ տարուան դպրոցական տարիէն սկսեալ ստիպուեցաւ այդ Մանկապարտէզը փակել և կարգագրել որ անոր երկսեռ աշակերտները կառքով երթեւեկեն Մաարտովի լնդարձակ լուսաւոր և առողջաւէտ Մանկապարտէզը, ունեւոր ծնողաց զաւակներն չափաւոր վճարումով մը, և աղքատներն ալ ձրիարաբ: Ժողովս ետքէն այս կարգագրութիւնն ըրտւ ի Մաարտով գտնուած երկսեռ վարժարանաց ուսանողներուն համար ալ եւ ուրախ է որ արդիւնքն գոհացուցիչ է և հետզհետէ աւելի գոհացուցիչ ըլլալու նշաններ ալ կան. այնպէս որ 1912 տարուան մէջ կառքի վարձքի համար ենթագրուած 500 սոկիէն 250ը աշակերտներէն գանձուելու յոյս կայ և այնպէս ալ նշանակուած է մատուցեալ պէտքէներուն մէջ:

Եւ որովհետեւ վարժարանի չքաւոր սանուց սննդագինն Աղքատաց պէտքէն հայթայթուիլն որոշելովը Պատէ. Ընդհանուր Ժողովն լնդունած է սա սկզբունքը թէ վարժարանի կարօտ աշակերտաց ոչ-ուսումնական պէտքերն Աղքատաց Սննդագութիւններ, Ժողովս նոյն աշակերտաց սննդագին, կառքի վարձքերու, զգեստագնի և գրական պիտոյքներու արժէքը, համագումար 560 սոկի աղքատաց լնդացիկ տարուան պէտքէին մէջ ելք և վարժարանի պէտքէին մէջ մուտք նշանակած է և անոնց Ընդհանուր Ժողովէն անփոփոխ վաւերացումը՝ թէեւ անուղղակիւ այլ մեծապէս պիտի աղդէ վարժարանի աշակերտաց թիւին և յառաջդիմութեան վրայ:

Ժողովս աւելորդ չհամարիր ի վեր հանել սա՛ պարագան թէ վարժարանի զբոսատեղիներն, որոնց փոշելից վիճակը մեծապէս կը վնարէր տղոց առողջութեան, չնորհիւ կալուածոց Հոգաբարձութեան մասնաւորապէս գնահատելի ջանքերուն, երկու թիզ խորութեամբ ծածկուեցան կաւացին յատկութեամբ օժանալ հողով, և վերցու վնասակար անպատեհութիւնը: Նաեւ հարկ եղած նորոգութիւնները կատարուեցան շէնքերուն վրայ և Մանկապարտէզի կողմն ալ ճեմիչներ հաստատուեցան:

Ժողովս շատ զբաղած է նաեւ նախորդ Հոգաբարձութեան օրով վարձուած և յետոյ արձակոււած պաշտօնեաներու խնդիրներով, զորս յաջողած է կարգագրել՝ ի՞նչ ի՞նչ նկատումներով նիւթական պատիկ զոհողութիւններ յանձն առնելով, կը մնայ միայն նախակին անօրէնին ծանօթ գատն՝ գատարաններու առջեւ առաջ:

Մասնաւոր գլխի մը մէջ խօսուած է բարեկիշատակ Գրիգոր էֆ. Եղիայեանի կտակագրի մասին, Ժողովս փափաքոզ է որ անոր յօգուտ վարժարանի տրամադրութիւնն այս տարութիւնէ զործագրութեան դրուի՝ և գոնէ երկու յուսուլից աշակերտներ բարձրագոյն վարժարաններ դրկուին հիմակութիւնէ՝ այս մասին բանակցած է Ազն. Մկրտիչ էֆ. Անդրանիկեանի հետ, որ համակարծիք գտնուած է որ մինչեւ վարժարանի կտակեալ կալուածին Առաջնորդարանի յանձնումը՝ այդ աշակերտաց բարձրագոյն վարժարանի ծախքերն հոգացուին կտակակտատարին կողմէ, սակայն եւ այնպէս խնդիրը Պատէ. Ընդհանուր Ժողովոյ կը մատուցուի այս մասին որոշում մը տրուելու համար:

Գալով Պօղոս էֆ. Կարապետեանի կտակին՝ անոր գտաերը Ժողովիս օրովն ալ շարունակուեցան Աղեքանդրիոյ Վերաբնիչ Խառն Գատարանը վճռեց որ կարապետեան Պետրոս էֆ. Պատապարտեալ ծանօթ գումարին համար տոկոս տայ ու նոնեւ հարիւրին տասը վար դնէ իրեն համար երբեւ մատակարարութեան ծախս:

Ժողովս նկատելով որ կարապետեան էֆ. Նոր շրջանի վարձքերւն հաշոց մատուցման և գրամոց վճարման համար գժուարութիւններ կը յարուցանէ, իր փաստարանին հրահանգ տուաւ որ նոր գատ մը բանայ կարապետեան էֆ.ի դէմ: Այս վերջինը սոկայն այդ հրահանգէն յետոյ՝ գիր մը ուղղելով Առաջնորդարան փափաք կը յայտնէ գատավարութեան վերջ տալ այլեւս և կը մատուցանէ Գահիրէի Ազգ. Վարժարանին կտակեալ կալուածոց ամրող հաշիւը յօրէ անտի մահուան իր հօր մինչեւ 1911 Հոկտ. 31 և տրամադրութիւն յոյց կուտայ՝ հաշուեքնութենէ յետոյ դրամը վճարել Վարժարանի Սննուկին:

Ժողովս կարապետեան էֆ.ի այս արամագրութենէն գո՞Տ իր հաշուեքնուիչին պաշտօն յանձնած է առ այս հորկ եղած քննութիւնը կատարել և արդիւնքը Ժողովին տեղեկագրել՝ յորմանին գործագրութիւն:

Ինչպէս յայտնի է Պուլագի ազգային վարժարանաց գիտնի սեպհականութեան եւ տարածութեան շուրջ խնդիրներ եւ դատեր կան, որոնց Ժողովոյս պաշտօնավարութեան օրով տեղի ունեցած երեւոյթներն կը համառօտուին ստոքս: Վարժարանաց ու Մանկապարտէզի գետիններն ինորոյ չափել տեսնուած է որ ամբողջը 3905 քառ. մէթը է, ինչ որ գրիթէ համապատասխանած է նախապէս եղած չափումին: Սակայն խնդիր եղած է որ

վարժարանաց հարաւի կողմը՝ ճանրէն անդին կտոր մըն ալ կայ իբր 526 մէթը, որ վսեմ Պօլոս փաշայի կողմէ՝ ժամանակին վրան վարժարանները շինուած կտորին հետ գնուած ու ազգին նուիլուած է և վերայիշեալ 3905 մէթրին մտու կը կազմէ և որ սակայն այսօր ուրիշի մը կողմէ զբանուած և վրան շնչք կտուցուած է։ Ստուգուած է նաև որ արեւմուտքի կողմը վարժարանի պատէն ներս կտոր մը կայ, որու համար կառավարութիւնը կը յայտարաբէ թէ իր սեպճականութիւնն է։

Ժողովս ամէն հաւանականութեանց դէմ պատրաստ գտնուելու համար՝ ինքն ալ իր կողմանէ դատ բացած է կառավարութեան, Սաքաքինի փաշային, ճանրէն անդին գտնուած յիշեալ կտորը գրաւողին և վաճառողին դէմ։ Առաջնորդարանին փաստաբանն այս օրերս գրած է թէ խնդրոյն հետ կապ ունեցող կողմերուն իրարու դէմ բացած դատերը, դատարանին կողմանէ ի մի ձուլուած են և ամենը մէկտեղ 1913 տարուան Յունուար ամսոյ 16ի Օրակարգն անցած է։

Կարապէս աղա Գալուսի յուշարձան։ — Պատկ. Ընդհանուր ժողովն ասկէ յառաջ որոշած էր վարժարանի առաջին հիմնադիր և բարերար երջանկայիշատակ կարապէտ աղա Գալուստի մահարձանի կանգնումը վարժարանի շրջապատին մէջ։ Ժողովս այս մասին խորհրդակցութիւն կատարելով՝ նկատեց թէ առ նուազն երկու հարիւր սակին պէտք կայ բարերարին երախտեաց արժանի արձանի մը համար։ Հետեւարար Ժողովս խնդրը գարձեալ Ընդհանուր ժողովով կը մատուցանէ թէ՛ վարկին հաստատելու և թէ՛ անոր աղբիւրն որոշելու համար։

### Դ. ԳՐԻԳՈՐ Էֆ. ԵՂԻԱՅԵԱՆԻ ԿՏԱԿ

Եղիպտահայ գաղութին նշանաւոր դէմքերէն րնիկ Գահիրէցի և Ռուսակատակ Գրիգոր էֆ. Եղիսյեան անցեալ տարուան Յունիս ամսոյ մէջ իր մահկանոցու կենաց լնթացքը կնքեց Թրիէստի մէջ, ուր գացած էր օգափսիսութեան համար և մարմինն իր ծննդդավագը քաղաքը փոխադրուելով մեծ հանդէսով ամփոփուեցաւ ընտանեկան գամբարանին մէջ։

Եղիայեան էֆ. ձգած է կտակագիր մը, որ հաստատուած է ձեռնհաս՝ այն է Աղեքսանդրիոյ Ռուսական Դատարանին կողմէ։ Ժողովս հակառակ իր փաստարանին միջոցաւ ըրտծ չտնքերուն, ցարդ թէւ չկրցաւ պաշտօնապէս վաւերացեալ պատճէն մէ ունենալ ի ձեռին, սակայն պարզ օրինակ մը Անդրանիկեան էֆ. իրարեացակամութեան նորիւ յանձնուած բլատով Առաջնորդարան, հետեւեալ կերպով կ'ամփոփուի անոր աղգաստատկան մասը։

Երջանկայիշատակ Եղիայեան էֆ. իր Մահալէ Քէպիրի Քրէտին մէջ ունեցած իբր 278 ֆէտրան ագարակն՝ էլաքներով, տուներով, կարասիքով, մշակութեան գործիքներով կտակած է Գաւհիրէի Գալուստեան Վարժարանին, որ պարտուոր է անոր հասողթներով կազմելու թոշակ մը (Bourse)՝ յօդուտ հայ աղքատիկ ուսոնողներու, առանց կրօնական գտանոնքի խորութեան կտակագիրը մի առ մի կը նշանակէ այս թոշակին պայմաններն եւ յարակից պարագաները։ Բաց աստի կտակագիրը կը տրամադրէ որ բարերարին Շուպրայի երկու առաներն, խոմայիլիէ թաղին մէջ ունեցած երեք տաւները՝ յարակից մասերով և ի թոհթու ունեցած 1500 քառ. կանգուն գետինը՝ կտակակատար Վսեմ. Պօլոս փաշա Նուպարի կողմէ վաճառուին և արգիւնքէն պարտքերն, անհատներու ի նաբաստ ըրտծ չուրջ 4000 սակիի հրիտակներն եւն։ Գճարուելէ յետոյ, աւելցածը Նորին վսեմաթեան կողմէ Առաջնորդարանի յանձնուի՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով Գահիրէի մէջ յարմար տեղ մը եկեղեցի մը կառուցուելու համար։

Եղիայեան էֆ. հինգ հարիւր սակիի հրիտակած բլատով նաեւ Գահիրէի հայ աղքատներուն, Ա. Զատկիի տօնին առթիւ Վսեմ. կտակակատարը հաճեցաւ այդ գումարն Առաջնորդարան դրկել եւ բաշխումը կտարարուեցաւ յատկապէս կազմուած Մասնախումբի մը ձեռքով։

### Ե. Կ Ե Ղ Ե Ց Ի

Եկեղեցւոյ արտաքին գուռն ցած և անցորմար ձեւ մը ունենալով, փայելուչ և աւելի մեծ գուռ մը շինուեցաւ այս տարի։ Հոգաբարձութիւնն առաջարկած էր որ արարողութեանց առ-

թիւ պաշտօնէից յատկացեալ սակերն ինք գանձէ և անոնց ամսականներուն վրայ ալ նիհար յաւելուածներ ընէ : Եւ այս հիման վրայ ալ այս տարուան պէտքէն պատրաստած ու ներկայացուցած էր :

Ժողովս նկատելով որ այս ձեւն երկար տարիներէ ի վեր ընդունուած սկզբունքի հակառակ էր, յարմար չգտաւ զայն . Ա ինք ընկալեալ սովորութեան համեմատ ուրիշ պիւտածէ մը պատրաստաց և մատոյց լնդհանուր ժողովոյ . բայց և այնպէս տեղեկացրիս կցեալ են Հոգաբարձութեան լիշեալ պէտքէն և անոր վերաբերեալ զրերը :

Հոս տեղն է շնորհակալութեամբ յիշելու թէ վսեմ . Պօղոս փաշայի ջանքերու շնորհիւ էլիոպոլիսի լնկերութիւնը 2513 Քելլընոց գետին մը նուեիրած է Գահիրէի Առաջնորդարանին՝ վրան եկեղեցի մը կառուցանելու համար, այս նուելն ընդունուած, գետինը ստացուած և պղտիկ ծախքով մըն ալ յանուն Առաջնորդարանի պաշտօնական արձանագրութիւն եղած է Խառն Դատարանի մէջ :

## Զ. ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ցաւալի է որ ինպաստ Աղքատախնումի վիճակահանութեան դորձն ակնկալուած յաջողութիւնը չի գաներ : Ժողովս պաշտօնավարութեան ձեռնարկած տառն՝ վիճակահանութիւնը իրը 400 սոկի տարեկան զուտ հասոյթ ունէր . հակառակ ժողովոյցս Ա Աղքատախնումի ջանքերուն՝ անցեալ Յունուտրին տարեկան հազիւ 250 սոկի հասոյթ տալու վիճակն ունեցաւ . և այսօր 150 սոկի հասոյթ կուտայ և շրջարեւութեան հանոււած շարաթական տամսերու թիւն ալ 30000էն իշած է 16000:

## Է. ԳԱՏՐՈ ՊԱՇՏՈՆԻՑԻՑ ՀԱՄԱՐ

Պատկ . Ընդհանուր Ժողովին աղքային բոլոր պաշտօնէից համար Գագոր կազմելու համար տուած որոշումը կարելի չեղաւ գործադրել, նախ որ Ժողովս իր բազմազբաղ վիճակին մէջ ժամանակ չունեցաւ և երկրորդ որ Հոգաբարձութիւններէ մէյ մէկ անգամ առնելու գրութիւնն զիւրաւ կիրարկելի չէ : Աւելի լաւ է այս գործը յաջորդ Քաղաքական ժողովոյ ձգուի, որտես զի ան իր յարմար գատած կիրապով Գագոր պատրաստէ կամ պատրաստել տայ և լնդհանուր Ժողովոյ քննութեան և վաւերացման մատուցանէ զայն :

## Բ. ՆՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԱՑՈՒՅԻՆ

Աղքային Գերեզմանատաւնը հետզհետէ կը լեցուի, և քանի մը տարի յետոյ ալզեւս կարելի չպիտի ըլլայ զայն գործածել : Առաջնորդարանն այժմէն բանակցութեան մտած է Եղիպտական կառավարութեան հետ, որ հաճած է խոստանալ յարմար գետին մը ձրիաբար տրամադրել նոր զերեզմանատան համար :

## Ծ. ԶԱԿԱՐԵՒՄԻԿ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

Ի Զակարեւմիկ երկար ժամանակէ ի վեր դոյութիւն ունի Աղքային Գերեզմանատաւն : Քանի մը տարի կայ որ վարձու չէնքի մը մէջ աղքային վարժարան մըն ալ հաստատուած է :

Տեղւոյն Պատ, աղքայինները կը փափաքին որ հեկեղեցի եւ վարժարանի սեպհական շէնք ունենան, առ այս 2500 սոկոյ պէտքն զգալի է, որուն 1100ը իրենց մէջ ստորագրած ըլլալով, Զակարեւմիկ աղքայինք իրը Գահիրէի Առաջնորդարանի իրաւասութեան շրջանակին մէջ զանուող հասարակութիւն, կը խնդրեն որ պակսածը Գահիրէի Առաջնորդարանի սնառուկէն հոգացուի :

Խնդրը Պատկ . Ընդհանուր Ժողովին կը մատուցուի ի անօրինութիւն :

**Ժ. Ժ. Ա. Ա. Ն Գ. Ա. Կ Ա Ն**

Ժողովս զբաղած է նաեւ ներկեներու և անչափահասներու խնամակալութեանց վերաբերեալ հին և նոր գործերով ու խնդիրներով, որոնք խիստ շատ անգամ իր նիստերու տեւողութեան մեծագոյն մասը զբաւած են:

**Ժ. Կ. Զ Մ Ա. Կ Ա Ն Կ Ա. Ն Ո Ն Ա Գ Ի Բ**

Ժողովս իր պաշտօնավարութեան ընթացքին մէջ տեսաւ անհրաժեշտ պէտքը տեղական կառավարութենէն ճանչցուած կանոնագրի մը, որու խնդիրն արդէն կը գտնուի Գահիրէի և Աղեքսանդրիոյ համագումար Ընդհանուր Ժողովոյ սեղանին վրայ:

**Ժ. Ա. Զ Գ Ա. Յ Ի Ւ Տ Ո Ւ Ի Բ**

Ժողովս կը ցաւի որ հակառակ յատուկ հաւաքիչ կարգած ըլլալուն՝ շատ քիչ ազգայիններ կը մասնակցին ազգային տուրքին: Յաջորդ Քաղաքական Ժողովին կը մնայ նոր միջոցներ ձեռք առնել ազգային տուրքի արդիւնաւորման համար:

**Ժ. Ս Ա. Կ Ա. Յ Ո Յ Յ**

Փորձով տեսնուած է թէ Առաջնորդարանի, Եկեղեցւոյ ու Մարմինայի սակերը բարեփոխման պէտք ունին ու առ այս պատկանեալ մարմիններն բազմաթիւ դիմումներ ըլլած են Ժողովիս, որ կը խնդրէ Պատկ. Ընդհանուր Ժողովին որոշել անոնց բարեփոխումն իր յարմար գատած միջոցով ու եղանակով:

**Ժ. Ա. Ա. Մ Ա Խ Ա Վ Ա Հ Ա Ն Խ Ա Ր Ա Բ Ա Ր Ա Բ**

Ժողովս Պատ. Կրօնական Ժողովի հետ գործակցաբար որոշած է նաեւ պատահած ամուսնական խնդիրները:

Ժողովս իր պաշտօնավարութեան ըրջանը լրանալուն ու հրաժարելուն առթիւ՝ ջերմ չնորհակալութիւն կը յացտնէ Եկեղեցւոյ, Մարմինայի, Կալուածոց և Աղքատաց Հոգաբարձութիւններուն, Վարժարանի Կրթական Մասնախումբին, անոնցմէ վաշելոծ գնահատելի աջակցութեան համար:

Նոյնպէս իր խորին չնորհակալութիւնը կը մատուցանէ Պատկ. Ընդհանուր Ժողովին, անոր առ ինքն ցոյց տուած վստահութեան և իր պաշտօնին դիւրութեան տեսակէտով ընծայած աջակցութեան համար:

Գումարէ 15/28 Մայէ 1912

**Երջանաւաբար Քաղաքական Ժողովոյ**

Անդամակիր

(Ասուր.) ՏՕՔԹ. Ա. Բ. ԺԱՄԿՈԶԵԱՆ

Անդամակիր

(Ասուր.) ԽՍՁԻԿ ՊԱՂՏԱՍՍՐԵԱՆ

Անդամ

(Ասուր.) Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Անդամ

(Ասուր.) ՏՕՔԹ. Ա. ԷԿՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ

Անդամ

(Ասուր.) ԱՐԴԱԿ ՖԻՐՄԱՆԵԱՆ

Անդամ

(Ասուր.) ՍՏԵՓԱՆ ԳԱԼԵՆՏԵՐ

Անդամ

(Ասուր.) Ս. ՄԵՐԿԵՐԵԱՆ

ԱՐԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԵՒ ՃԻՒՂԵՐՈՒՆ

1911 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՇԻԽՆԵՐԸ

ՀԱՆԴԵՐՁ ԲԱՑԱՏՐՈՒԹԵԱՄԲ



ଓଡ଼ିଆ ଲେଖକ ପରିଚୟ

ԿԱԼՈՒԱՄՆԵՐ		ՏԱԱԽԵՐ		ԶՈՒՏ ՀԱՆՏ		ԳՈՒՄԱՐ ՀԱՆՏ		1911-ի ՏԱԱԽԵՐ	
<b>Ս. Նկեղեցոյ սեփական</b>		19326		7248		12077		300	
<b>Ֆէկառլէլ կէս տուհ.</b>		419817		106678		313138		169386	
<b>Աղբանոց սեփական</b>		88604		60529		28075		36081	
<b>Էդքաշնի էրտ-էլէ-</b>		88604		6830		5206		2840	
<b>Հինոսուի էրտ-էլէ-</b>		35 տուհ.		6330		2725		3604	
<b>Պէհի Արտէնի թիւ 34 տաճ գէս</b>		34 տաճ գէս		36372		7227		29145	
<b>Ֆըրանքաց թաղին տաճ, թիւ 122, (խոլիկ)</b>		(խոլիկ)		2440		423		1977	
<b>Տարպակ էլ գաղինուի խանութ</b>		34 տուհ.		2760		371		2388	
<b>Պէհի Արտէնի 5 խանութիւնու մէկ կը բորբոք</b>		5 խանութիւնու մէկ կը բորբոք		1472		86		1386	
<b>Պէկարժարանի սեփական</b>		155823		67592		88230		49030	
<b>Տէնայի էրտ-էլէ-</b>		286757		104191		182596		141870	
<b>Պէհի Արտէնի թիւ 34 տաճ գէս</b>		6330		2725		3605		3605	
<b>Մարմայի սեփական</b>		150		110		40		274431	
<b>Տարպակ էլ կինէնայի տուհ.</b>		1860		658		1202		1242	
<b>Առաջարարականի սեփական</b>		66520		25519		41001		16329	
<b>Փէհանէլ Արտէնի էրտ-էլէ-</b>		5536		4371		1165		1429	
<b>Պէհի Արտէնի տուհ.</b>		1800		370		1429		43595	
<b>1108717 3960291</b>		1108717 3960291		1108717 3960291		1108717 3960291		1108717 3960291	

(\*) Սովոր բնի համար ծախոց մէջ կատար գումարելով դաշտի բաժինն է 59989 դր. ողչ, նետելավ մասնակութան ընապէ.

၃၂၁

S.  $L_{h_1, \alpha_1}^{h_2, \alpha_2}$   $\Phi_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2}$  (2)  
S.  $S h_1^{\alpha_1} \varphi_{\alpha_1} \varphi_{h_2, \alpha_2}$ ,  $\zeta_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2}$  (6)  
S.  $\log L_{h_1, \alpha_1}^{h_2, \alpha_2}$ .  $\Psi$ .  $\Omega_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2}$ ,  $\varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2}$  (8)  
S.  $\Psi_{\alpha_1, \alpha_2, \alpha_3, \alpha_4} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2} \varphi_{h_3, \alpha_3} \varphi_{h_4, \alpha_4}$ ,  $\zeta_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{\alpha_3} \varphi_{\alpha_4} L_{h_1, \alpha_1}^{h_2, \alpha_2} L_{h_3, \alpha_3}^{h_4, \alpha_4}$ . (5)  
 $O_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{\alpha_3} \varphi_{\alpha_4} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2} \varphi_{h_3, \alpha_3} \varphi_{h_4, \alpha_4}$  (1)  
 $\Psi_{\alpha_1, \alpha_2, \alpha_3, \alpha_4} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2} \varphi_{h_3, \alpha_3} \varphi_{h_4, \alpha_4}$   
 $\zeta_{\alpha_1} \varphi_{\alpha_2} \varphi_{\alpha_3} \varphi_{\alpha_4} \varphi_{h_1, \alpha_1} \varphi_{h_2, \alpha_2} \varphi_{h_3, \alpha_3} \varphi_{h_4, \alpha_4}$

Առաջնորդարանի հաշուելումուց համաձայն է եւ հասաւուած Քաղաքական Ժողովը 12/25 Մայիս 1912ի նիստին մէ՞:

卷之三

Digitized by srujanika@gmail.com

# Ա. ԿԱԼՈՒՄԱՎԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԿԱԼՈՒՄԱՎԱՐԱՆ ՀԱՍՈՑՔՆԵՐ

### ԺԷԼԻՎԱԼԵՒ ԿԵՍ ՄՈՒՆ

Այս տան հին ընկեր Սալեհ էֆ. Բէֆուլի  
ժառանգորդներէն գանձուածը, հին վարձ-  
քերէ մնացորդ պահանջի փոխարէն . . .  
1911ի վարձքերէն . . . . .

(Խւրաբանչիւր անօսրծ կալուածի յետամնաց  
վարձերու բանակը տեսնել կալուածոց Հոգա-  
բարձութեան համբաւին մէջ)

Վ. Դ. Պ.

7376			
6484			
	13860		
	13860		

12077 70

### Կալուածական զօւտ հասոյք

Ֆէկկալէի կես մուն . . . . .  
Ամակալէի կես մուն . . . . .  
